ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2025 թվականի հունիսի 4-ին կայացած գիտական խորհրդի N 18 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. **Սերվիսի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման համար մրցութային ընտրություն**
2. **Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման համար մրցութային ընտրություն**
3. **Ընթացիկ հարցեր**

Գիտական խորհրդի նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանի հաղորդումը **Սերվիսի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի վերաբերյալ:** Նա հրապարակեց ընտրությամբ համալրվող պաշտոնների ցանկը և հավակնորդների տվյալները: Դեկան Ս.Քելյանը նշեց նաև, որ **«Սերվիս»** ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար **դիմել է մեկ թեկնածու**՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեյրան Ռաֆիկի Սուվարյանը:

ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մրցութային հանձնաժողովի նախագահ դոց.Ա.Հ.Պոտոսյանի** հաղորդումը **«Սերվիս»** ամբիոնի դոցենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի կողմից ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին

մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Դոց.Ա.Հ.Պոտոսյանը նշեց, որ դոց.Ս.Ռ.Սուվարյանի մասնագիտական որակներն ու գիտամանկավարժական գործունեությունը ինչպես նաև աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով սահմանված պահանջներին:

ԱՌԱՋԱՐԿԵՅԻՆ. «Սերվիս» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում ընտրվելու հավակնորդ դոց.Ս.Ռ.Սուվարյանի ծրագրային ելույթի, հարց ու պատասխանի, քննարկումների և ամփոփիչ ելույթի տևողությունը սահմանել 15-20 րոպե:

ԼՍԵՅԻՆ. «Սերվիսի» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում ընտրվելու հավակնորդ դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի ծրագրային ելույթը, որի ընթացքում նա ներկայացրեց ամբիոնում աշխատակիցների մասնագիտական որակների բարձրացման, մասնագիտական զարգացմանը նպաստող աշխատանքային միջավայրի ձևավորման և աշխատակիցների ինքնազարգացմանն ուղղված տեսլականը: Հրապարակեց կրթության զարգացմանն ուղված կետերը և դրանց հետևողական իրականացման արդյունքում ակընկալվող դրական ձեռքբերումները: Հավակնորդ դոց.Ս.Ռ.Սուվարյանը կարևորվեց ամբիոնի դասախոսների խրախուսումն ու գիտական հոդվածների հրապարակման խթանումը, ինչպես նաև մասնագիտական հայալեզու գրականության ստեղծումը: Ներկայացրեց միջազգային մասշտաբի գիտական միջոցառումների, սեմինարների և գիտաժողովների կազմակերպման, սերվիսագիտության մեթոդաբանության զարգացման շարունակականության միտումը: Ծանոթացրեց համագործակցության ծրագրերին, որոնք նպատակ ունեն խորացնել միջֆակուլտետային համագործակցությունը ԵՊՀ շրջանակներում, ինչպես նաև ամրապնդելու արտասահմանյան գործընկերների հետ ձեռքբերված կապերը և ստեղծել նոր կապեր, զարգացնել գործատուների և աշխատաշուկայի հետ փոխհարաբերությունները:

Խոսքն ամփոփելով՝ հավակնորդ դոց.Սեյրան Սուվարյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանին, գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ

Գ.Փ.Ալեքսանյանին ինչպես նաև աշխատակիցներին՝ համագործակցելու և օժանդակելու համար (ծրագրային ամբողջական ելույթը կցվում է):

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամնակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանը հետաքրքրվեց

1. Ի՞նչ վերջնարդյունք կունենա դիմորդը **«Սերվիս»** մասնագիտությունն ընտրելիս:
2. Արդյո՞ք **«Սերվիս»** մասնագիտության մագիստրատուրայի կրթական ծրագիրը վերաձևակերպման կարիք չունի:
3. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆ.Պ.Ս.Էֆենդյանի հարցը վերաբերում էր **«Սերվիսի»** մասնագիտության գրավչությանը:

ՊԱՏԱՍԽԱՆԵՑԻՆ. Հավակնորդ դոց.Ս.Ռ.Սուվարյանը

1. ընդունեց, որ հասարակության մեջ կա **«Սերվիս»** մասնագիտության, բովանդակության ընկալման տարակարծություն, ինչը փոխելու համար պահանջվում է ժամանակ: Կոչ արեց միանալ մասնագիտության ընկալման փոփոխության ուղղությամբ տարվող բարդ գործին: Միևնույն ժամանակ դոց.Ս.Ռ.Սուվարյանը նշեց, որ **«Սերվիս»** մասնագիտության լավագույն կրթությունը տալիս է ԵՊՀ-ն:
2. - **«Սերվիս»** մասնագիտության մագիստրատուրայի կրթական ծրագրերում անընդհատ իրականացվում են փոփոխություններ՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակի և շուկայի պահանջներին,-նշեց հավակնորդը:
3. դոց.Ս.Ռ.Սուվարյանը նշեց, որ **«Սերվիս»** մասնագիտության **«**գրավչության ապահովումը**»** բազմաբաղադրիչ է, որտեղ մեծ դեր ունեն ուսման վարձը, կրթական ծրագրում ընդգրկված դասընթացների քանակը, դրանց բարդության աստիճանը և այլն:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանը** խոսեց ամբիոնի պոտենցիալի մասին, **«Սերվիս»** մասնագիտության ոչ միանշանակ ընկալման և կրթական ծրագրերի փոփոխությունների վերաբերյալ: Համաձայնեց, որ լավագույն կրթությունը **«Սերվիս»** մասնագիտության ուղղությամբ տալիս է ԵՊՀ-ն և հույս հայտնեց, որ հավակնորդի կողմից ներկայացրած ծրագիրը կբերի **«Սերվիս»** ամբիոնի գիտական պոտենցիալի բարձրացմանը և դիմորդների թվի դրական դինամիկայի:

ԱՌԱՋԱՐԿԵՅԻՆ. **Փակ, գաղտնի քվեարկություն** անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Մարինե Սարգսի Մկրտչյան, անդամներ՝ դոց.Եսթեր Սոսի Մանուկյան, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Հովհաննես Արծրունի Հովհաննսիյան:

ՈՐՈՇԵՅԻՆ. **Փակ, գաղտնի քվեարկություն** անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Մարինե Սարգսի Մկրտչյան, անդամներ՝ դոց.Եսթեր Սոսի Մանուկյան, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Հովհաննես Արծրունի Հովհաննսիյան:

ԼՍԵՅԻՆ. **Հաշվիչ հանձնաժողովի** նախագահ դոց.Մարինե Սարգսի Մկրտչյանի հաղորդումը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների վերաբերյալ: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին **28** անդամ, քվեարկության մասնակցել են **28**-ը:

«Սերվիս» ամբիոնի վարիչի պաշտոնում դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի թեկնածությանը **ԿՈՂՄ** են քվեարկել **24-ը, ԴԵՄ՝ 3:**

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ 1:

ՈՐՈՇԵՅԻՆ. **Հաստատել** հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների վերաբերյալ և **«Սերվիս»** ամբիոնի վարիչի պաշտոնում **ընտրված համարել** հավակնորդ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանին:

Որոշումն ընդունվեց միաձայն:

2. ԼՍԵՅԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանի հաղորդումը **Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի վերաբերյալ:** Նա հրապարակեց ընտրությամբ համալրվող պաշտոնների ցանկը և հավակնորդների տվյալները: Դեկան Ս.Քելյանը նշեց նաև, որ **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների**

հետախուզման» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար **դիմել է մեկ թեկնածու՝** երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Միերի Մանուկյանը:

ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մրցութային հանձնաժողովի նախագահ դոց.Ա.Հ.Պոտոսյանի** հաղորդումը **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի դոցենտ, երկրաբանական գիտությունների թեկնածու, Վահան Միերի Մանուկյանի կողմից ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Դոց.Ա.Հ.Պոտոսյանը նշեց, որ դոց.Վ.Մ.Մանուկյանը մասնագիտական որակներն ու գիտամանկավարժական գործունեությունը ինչպես նաև աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով սահմանված պահանջներին:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում ընտրվելու հավակնորդ դոց.Վ.Մ.Մանուկյանի ծրագրային ելույթի, հարց ու պատասխանի, քննարկումների և ամփոփիչ ելույթի տևողությունը սահմանել 15-20 րոպե:

ԼՍԵՑԻՆ. **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում ընտրվելու հավակնորդ դոց.Վահան Միերի Մանուկյանի ծրագրային ելույթը, որի ընթացքում նա խոսեց ամբիոնում գիտահետազոտական աշխատանքների որակի բարձրացման, պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական վերապատրաստման, ոլորտի առաջատար մասնագետների ներգրավման, ուսումնական ծրագրերի արդիականացման, երիտասարդ մասնագետների և հետազոտողների սերնդափոխության մասին: Դոց.Վ.Մ.Մանուկյանը ներկայացրեց **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնում առկա խնդիրները, դրանց լուծման համար դրված ռազմավարական նպատակները: Վերջիններիս իրագործելու համար դոց.Վ.Մանուկյանը ներկայացրեց հետևյալ քայլերը՝ նոր մրցունակ կրթական ծրագրերի մշակում, ուսումնական և

մասնագիտական պրակտիկաների իրականացման բարելավում, ապագա դիմորդների համար մասնագիտության, կրթական ծրագրերի և մասնագիտական աշխատանքի հեռանկարների պատճաշ լուսաբանում, միջդիսցիպլինար համագործակցություն, թեմատիկ ֆինանսավորմամբ մրցութային ծրագրերի մասնակցություն, ոլորտում գործող գիտահետազոտական ընկերությունների և մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցություն:

Խոսքն ամփոփելով՝ հավակնորդ Վահան Մանուկյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանին, գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանին ինչպես նաև աշխատակիցներին՝ համագործակցելու և օժանդակելու համար (ծրագրային ամբողջական ելույթը կցվում է):

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆ.Պ.Ս.Էֆենդյանի հարցը վերաբերում էր **«Մարքշեյդերական գործ»** մասանգիտության անհրաժեշտությանը և կրթական ծրագրի կազմակերպմանը:

ՊԱՏԱՍԽԱՆԵՑԻՆ. Հավակնորդ դոց.Վ.Մ.Մաուկյանը ցավով արձանագրեց, որ գործող կրթական ծրագրերում նշված ոլորտին հարող որևէ դիսցիպլին տեղ չի գտել:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանը** կարևորեց **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի գիտական պոտենցիալը: Խոսեց **«Մարքշեյդերական գործ»** մասանգիտության ներդրման կարևորության մասին: Խոսքի ավարտին դեկան Ս.Ս.Քելյանը, բացի գիտական աշխատանքների ուղղությամբ տարվող աշխատանքներից, կոչ արեց նաև ցուցաբերել նախաձեռնողականություն գիտական աշխատանքներ իրականացնելիս՝ օգտագործելով թե՛ տեղական և թե՛ միջազգային գործընկերների ներուժը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. **Փակ, գաղտնի քվեարկություն** անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Մարինե Սարգսի Մկրտչյան, անդամներ՝ դոց.Եսթեր Սոսի Մանուկյան, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Հովհաննես Արծրունի Հովհաննսիյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. **Փակ, գաղտնի քվեարկություն** անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Մարինե Սարգսի Մկրտչյան, անդամներ՝ դոց.Եսթեր Սոսի Մանուկյան, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Հովհաննես Արծրունի Հովհաննսիյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Մարինե Սարգսի Մկրտչյանի հաղորդումը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների վերաբերյալ: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին **28** անդամ, քվեարկության մասնակցել են **28**-ը:

«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի վարիչի պաշտոնում դոց.Վահան Միերի Մանուկյանի թեկնածությանը **ԿՈՂՄ** են քվեարկել **27-ը, ԴԵՄ՝ 1:**

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ **0**:

ՈՐՈՇԵՑԻՆ. **Հաստատել** հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների վերաբերյալ և **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի վարիչի պաշտոնում **ընտրված համարել** հավակնորդ երկրաբանական գիտությունների թեկնածու, դոց.Վահան Միերի Մանուկյանին:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Գիտական խորհրդի նախագահ **Ս.Ս.Քելյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ե.Ս.Մանուկյան**